

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртытиан» (образование) еженедельник 14.02.2024թ. չորեքշաբթի թիվ 7 (1136)

Տյառնընդառաջ (Տրևդեգ)

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ամեն տարի՝ փետրվարի 14-ին՝ Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածայտնության օրվանից 40 օր հետո, մեծ հանդիսավորությամբ նշում է քառասուն օրական մանուկ Հիսուսին տաճարին ընծայաբերելու տոնը՝ **Տյառնընդառաջը**: Տյառնընդառաջ՝ նշանակում է *Տիրոջն ընդառաջ գնալ*:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ՝ *Տյառնընդառաջը* հռչակվել է **նորասպակների օրհնության օր**:

Տյառնընդառաջի տոնակատարությունները սկսվում են փետրվարի 13-ին: Երեկոյան ժամերգության ընթացքում կատարվում է **Անդաստանի** (արտերի եւ այգիների) **օրհնություն**, որը խորհրդանշում է ձմռան ավարտի մոտենալը եւ *գարնանամուտը*: ժամերգության ավարտին կատարվում է *մոմի օրհնություն*: Հավատացյալներն օրհնված մոմերից վառում են իրենց մոմերը՝ **Քրիստոսի** փրկարար լույսի խորհրդանշիչ իրենց հետ տանելով տուն:

Ժողովրդական սովորույթի համաձայն՝ օրհնված մոմի կրակով են վառում նաեւ *Տյառնընդառաջի* խարույկը: Ըստ **Սուրբ Գրիգոր Տաթևացու**՝ խարույկի կրակը բորբոքելիս հայցում ենք Աստվածային սիրո հուրը: Ինչպես **Տիրոջը** տաճարին ընծայելու ժամանակ ժողովուրդը ջահերով եւ կանթեղներով ելավ **Նրան** ընդառաջ, մենք էլ նույն օրհնակով կրակ ու ջահ ենք վառում եւ **Տիրոջ** գալստյան նախատոնակը կատարում: Հեթանոսներն **Աստծո** պատիվը կրակին էին մատուցում, իսկ մենք կրակը, որպես **Քրիստոսի** ծառա, բերում ենք **Նրան** ծառայեցնելու:

Տյառնընդառաջը Տիրոջն ընդառաջ գնալու հրավեր է բոլորին: **Քրիստոսը՝ Աստծո Միածին Որդին**, երկնքից խոնարհվեց եւ մեր փրկության համար աշխարհ եկավ: Սա Աստվածային սիրո գերագույն դրսևորումն է **Արարչից** հեռացած արարածի հանդեպ: *Մարդացած Աստվածորդին* ամեն պահ դիմում է մեզ. **«Եկե՛ք Ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, եւ ես ձեզ խաղաղություն կպարգևեմ»** (Մատթ. ԺԱ 28): Հաջորդ քայլը մերն է: Յուրաքանչյուրս պետք է անսասնք **Տիրոջ** ձայնին, քանզի ով **Նրա** հետեւից է գնում, **«խավարի միջով չի քայլի, այլ կընդունի կյանքի լույսը»** (Յովհ. Ը 12):

Ըստ *Ավետարանի՝ Հովսեփին* ու *Մարիամը* Բեթղեհեմում 40 օր մնալուց հետո վերցնում են մանուկ **Հիսուսին** եւ գնում Երուսաղեմ **Նրան** ներկայացնելու **Տիրոջը** (Ղուկ. Ա 22): Նրանց ընդառաջ է գալիս **Սիմոն** անունով **Աստծո** ծառան, ով **Տիրոջից** խնդրել էր իրեն այնքան կյանք տալ, մինչեւ տեսնի մարդկության **Փրկչին՝ Աստծո Որդուն**: Սրբազան ավանդության համաձայն, երբ տեղ են հասնում, **Աստծո** հրամանով փակված տաճարի արեւելյան դուռը բացվում է:

Տյառնընդառաջի տոնական *Սուրբ Պատարագից* հետո բոլոր եկեղեցիներում կատարվում է **նորասպակների օրհնության կարգ**:

Սովորության համաձայն՝ *Տյառնընդառաջի* տոնին նվերներով այցելում են նորասպակներին:



Շառլ Ազնավուր - 100

Հրեյանական հանձնաժողովի նիստում

Վարչապետի աշխատակազմի ղեկավար, Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակի հրեյանական հանձնաժողովի նախագահ **Արայիկ Հարությունյանի** գլխավորությամբ կառավարությունում տեղի է ունեցել վերոնշյալ հանձնաժողովի հերթական նիստը: Նիստին ներկա են եղել նաեւ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը** եւ նախարարի տեղակալ **Դանիել Դանիելյանը**, Շառլ Ազնավուրի որդին **Նիկոլա Ազնավուրը**:

Հարունակությունը՝ էջ 2

Խորհրդարան

«Հայո՛ց պատմություն», թե՛ «Հայաստանի պատմություն»

Ազգային ժողովի նստաշրջանում Կառավարություն-ԱԺ հարցուպատասխանի ընթացքում պատգամավորները հարց են ուղղել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանին** առ այն, թե ինչով է պայմանավորված «Հայոց պատմություն» առարկան «Հայաստանի պատմություն» վերանվանելու նախագիծը խնդրելով ներկայացնել դրա հիմնավորումները:

Ի պատասխան ժաննա Անդրեասյանը նշել է, որ առարկան անվանափոխելու հարցը ներկայում բավական ակտիվ քննարկվում է, սակայն այն նոր չէ:

Հարունակությունը՝ էջ 2

Համակարգ

Գերազանցության մեդալ այլեւ չի շնորհվի

«Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման եւ ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգում» կատարված փոփոխությունների համաձայն՝ այս տարվանից այլեւս հանրակրթական դպրոցների շրջանավարտների համար գերազանցության մեդալի շնորհման գործընթաց նախատեսված չէ:

Հարունակությունը՝ էջ 2

Նախագիծ

Օժանդակության ծրագիր

ԿԳՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել «Հանրակրթության մասին» օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջով մասնագիտական գործունեությունը դադարեցված բարձրագույն կրթություն չունեցող մանկավարժների օժանդակության ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

2021 թվականին «Հանրակրթության մասին» օրենքում կատարված փոփոխությունների անցումային դրույթներով սահմանվել է՝ այն ուսուցիչները, որոնք չունեն բարձրագույն կրթություն, կարող են շարունակել իրենց մասնագիտական գործունեությունը մինչեւ 2018 թվականի օգոստոսի 20-ը: Այնուհետեւ սահմանված վերջնաժամկետը երկարացվել է մինչեւ 2023 թվականի օգոստոսի 20-ը:

Հարունակությունը՝ էջ 2

Գերազանցության մեղալ ալլես չի շնորհվի

սկիզբը՝ էջ 1

Սովորող համարվում է գերազանց առաջադիմություն ունեցող, եթե տվյալ ուսումնական տարվա ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաներից գնահատվում է տարեկան 9-10 միավոր եւ 12-րդ դասարանում պետական ավարտական քննություններից՝ 18-20 միավոր: Կրթության 3-րդ աստիճանի ավարտին սովորողին տրամադրվում է «Գերազանցության» նշումով միջնակարգ կրթության ատեստատ:

Փոփոխությունները պայմանավորված են ընթացող կրթական բարեփոխումներով՝ հանրակրթության նոր չափորոշիչի հաստատմամբ, որի հիմքում դրվել են կրթական համակարգի արդյունավետության կոմպետենցիաները, ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների միջոցով կարողունակությունների ձեւավորումը:

Միաժամանակ տեղեկացնենք, որ գերազանցության մեղալի համար բուհական ընդունելության քննություններում արտոնություններ նախատեսված չէին:



Յոթեյակական հանձնաժողովի նիստում

սկիզբը՝ էջ 1

Քննարկվել են նիստի օրակարգում ներառված հարցերը, որոնք վերաբերել են աշխարհահռչակ շանսոնյեի հորեյակին նվիրված համերգային ծրագրերի, ցուցահանդեսների, գիտաժողովի, տոնակատարությունների մեկնարկն ազդարարող միջոցառման կազմակերպմանն ու անցկացմանը: Անդրադարձ է կատարվել նաեւ միջոցառումների հանրային իրազեկմանը վերաբերող հարցերի:

Հանդիպմանը հատկացվել են միջոցառումների անցկացման ձեւաչափերն ու ժամանակացույցը: Քննարկումների արդյունքում հանձնաժողովը հաստատել է ծրագրի վերջնական տարբերակը:

Արայիկ Հարությունյանը հանձնարարել է արդեն իսկ սկսել այն միջոցառումների կազմակերպման հետ կապված աշխատանքները, որոնք հանձնաժողովի կողմից հաստատվել են, իսկ այն հարցերը, որոնք բարձրացվել են այսօրվա նիստի ընթացքում, դրանց շուրջ կազմակերպել քննարկումներ եւ հաջորդ նիստին ներկայացնել համապատասխան առաջարկություններ եւ լուծումներ:



* * *

Ֆրանկոֆոնիայի մշտական խորհրդի կայացրած որոշման համաձայն 2027 թվականի Ֆրանկոֆոնիայի մարզանշակության խաղերը կանցկացվեն Երեւանում: Հայաստանի Հանրապետությունը կհյուրընկալի ավելի քան 50 պատվիրակությունների շուրջ 4000 մասնակիցների:


«Հայոց պատմություն», թե՛ «Հայաստանի պատմություն»

սկիզբը՝ էջ 1

Ըստ նախարարի՝ հարցն առնվազն մի քանի անգամ քննարկվել է մասնագիտական շրջանակների կողմից: «Մի մասի մասին բարձրաձայնել են իրենք՝ ակադեմիական որոշ շրջանակները, որ այս հարցին անդրադարձել են անկախությունից հետո, երբ ընդհանրապես առարկայի վերահիմնաստավորման խնդիր են դրել: Երկրորդ անգամ հարցն ավելի լայն քննարկվել է, երբ հանրակրթության պետական նոր չափորոշիչն էր քննարկվում: Ես այդ բոլոր քննարկումներից հանգել եմ մի եզրակացության, որ առարկայի անվանումն ամենեւին էլ մասնագիտական տիրույթի խնդիր չէ, որովհետեւ «Հայոց պատմություն» առարկան, որն ուսուցանվում էր, պետք է ունենար կոնկրետ նպատակ: Մենք ապրում ենք Հայաստանի Հանրապետությունում, եւ ՀՀ դպրոցներում պետք է անցնեն Հայաստանի պատմությունը: Եվ սա բոլորովին չի նշանակում, թե Հայաստանի պատմություն կոչելով՝ առարկայից դուրս է մնալու այն բովանդակությունը, որը կազմում է մեր պատմության մասը: Սա ամենեւին բովանդակության մասին չէ. բովանդակությունը նույնն է՝ անկախ անվանումներից: Անվանումն այն մեթոդաբանական դիտանկյունն է, որով մենք մոտենում ենք պատմության ուսուցանմանը: Երբ ես ասում էի, որ պատմության ուսուցանումն ունի կոնկրետ նպատակ, պիտի շեշտադրեմ այդ նպատակը, որը տարբեր երկրներում է իրականացվում: Ամեն երկրում պատմության ուսուցանումը առաջին հերթի այդ պետության, երկրի քաղաքացիների ձեւավորման գործընթաց է», - նշել է նախարարը՝ շեշտելով՝ առաջնահերթ է, որ պատմության

ուսուցանումը կազմակերպվի ու կառուցվի պետության առանցքի շուրջը, անկախ նրանից՝ այդ ժամանակահատվածներում պետությունը եղել է, թե չի եղել: «Կարելի է կոնկրետ օրինակներով ցույց տալ այսօրվա մեր դասագրքերի խնդիրները, որոնք հենց պետականության մտածողության բացակայություն են սերմանում մեր աշակերտների մոտ եւ այն լուծումները, որոնք կունենանք նոր տարբերակի պարագայում», - ավելի է ժամանա Անդրեասյանը:

Ֆրանկոֆոնիայի մշտական խորհրդի կայացրած որոշման համաձայն 2027 թվականի Ֆրանկոֆոնիայի մարզանշակության խաղերը կանցկացվեն Երեւանում: Հայաստանի Հանրապետությունը կհյուրընկալի ավելի քան 50 պատվիրակությունների շուրջ 4000 մասնակիցների:



«Հայոց պատմություն» առարկան, որն ուսուցանվում էր, պետք է ունենար կոնկրետ նպատակ: Մենք ապրում ենք Հայաստանի Հանրապետությունում, եւ ՀՀ դպրոցներում պետք է անցնեն Հայաստանի պատմությունը: Եվ սա բոլորովին չի նշանակում, թե Հայաստանի պատմություն կոչելով՝ առարկայից դուրս է մնալու այն բովանդակությունը, որը կազմում է մեր պատմության մասը: Սա ամենեւին բովանդակության մասին չէ. բովանդակությունը նույնն է՝ անկախ անվանումներից: Անվանումն այն մեթոդաբանական դիտանկյունն է, որով մենք մոտենում ենք պատմության ուսուցանմանը: Երբ ես ասում էի, որ պատմության ուսուցանումն ունի կոնկրետ նպատակ, պիտի շեշտադրեմ այդ նպատակը, որը տարբեր երկրներում է իրականացվում: Ամեն երկրում պատմության ուսուցանումը առաջին հերթի այդ պետության, երկրի քաղաքացիների ձեւավորման գործընթաց է», - նշել է նախարարը՝ շեշտելով՝ առաջնահերթ է, որ պատմության

Հեղինակ՝ ԳՐԻԳՈՐ ԿՐԻՍՏՈՍՅԱՆ

Օժանդակության ծրագիր

սկիզբը՝ էջ 1

Չնայած բազմաթիվ ուսուցիչներ ապահովվել են օրենքի պահանջի կատարումը, այդուհանդերձ, բարձրագույն կրթություն չունեցող ավելի քան 1300 ուսուցիչներ նշված ժամկետում պետք է դադարեցնեն ուսուցչական աշխատանքը:

2023 թվականին «Հանրակրթության մասին» օրենքում նախաձեռնվել են փոփոխություններ, որոնց համաձայն՝ եթե բարձրագույն կրթություն չունեցող ուսուցիչները մասնակցեն կամավոր ատեստավորմանը եւ հաղթահարեն ատեստավորված համարվելու շեղ, կարող են շարունակել ուսուցչական աշխատանքը: Հակառակ պարագայում՝ նրանք դադարեցնում են իրենց մանկավարժական գործունեությունը:

Ատեստավորմանը մասնակցել է բարձրագույն կրթություն չունեցող 894 ուսուցիչ, որոնցից 354-ը կամավոր ատեստավորման արդյունքում համարվել են ատեստավորված:

վորման արդյունքներով համարվել է ատեստավորված: Նրանք շարունակում են իրենց ուսուցչական գործունեությունը եւ ստանում վարձատրություն բարձրացված դրույքաչափով ու հավելավճարով համաձայն ատեստավորման արդյունքների:

Այդուհանդերձ, մի քանի հարյուր ուսուցիչներ օրենքի սահմանված պահանջին չհամապատասխանելու հիմքով դադարեցրել են ուսուցչական գործունեությունը՝ պահպանելով ուսուցչի աշխատանքը վերսկսելու համար օրենսդրությամբ սահմանված երկու եղանակներից որևէ մեկից օգտվելու հնարավորությունը, այն է՝ բարձրագույն կրթություն ստանալ կամ կամավոր ատեստավորման հետագա փուլին մասնակցելն ու ատեստավորման համար օրենսդրությամբ սահմանված շեղ հաղթահարելը:

ԿԳՄՍ նախարարությունը մշակել է վերոնշյալ ուսուցիչների օժանդակության ծրագիր, որի նպատակը բարձրագույն կրթություն չունեցող եւ «Հանրակրթության մասին» օրենքի համաձայն ուսուցչական աշխատանքը դադարեցված ուսուցիչների հետագա մասնագիտական գործունեությունը շարունակելուն աջակցելն է խրախուսելով մասնագիտական զարգացումը եւ նպաստելով ուսուցիչների թափուր տեղերի համալրմանը:

Ըստ այդմ ծրագրի շահառու հանդիսացող անձը, որի մասնագիտական գործունեությունը դադարեցվել է 2023 թվականին, կարող է.

- Կրթություն ստանալ ուսուցչի որակավորում չունեցող բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկում կամ շարունակել այն՝ ընդհատված լինելու դեպքում: Բարձրագույն կրթություն ստանալու համար ծրագրի շահառուի տվյալ կիսամյակի ուսման վարձը կարող է փոխհատուցվել պետության կողմից՝ այդ նպատակով բուհին համապատասխան դիմում ներկայացնելու դեպքում: Հետագա կի-

սամյակների ուսման վարձի փոխհատուցումը դադարեցվում է, եթե շահառուն չի ապահովում առնվազն 60 % ՄՈԳ կամ դադարեցնում է ուսումնառությունը:

- Կամավոր ատեստավորման նպատակով մասնակցել առարկայի իմացության համար սահմանված վերապատրաստմանը: Նախարարությունն օրենսդրության համապատասխան կազմակերպում է վերջիններիս վերապատրաստումը՝ այդ նպատակով պետական բյուջեում սահմանված միջոցների շրջանակում:

Նախագծով սահմանվել է, որ բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու կամ կրթությունը շարունակելու, ինչպես նաեւ կամավոր ատեստավորմանը մասնակցելու համար առարկայի իմացության վերապատրաստում անցնելու դիմումների ներկայացման ժամկետը երեք ամիս է՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո:

Հ. ՀՈՎԳԱՆՆԻՍՅԱՆ

Վասն մանկանց

Սոցիալական պաշտպանության ոլորտի հետ համագործակցությամբ

ՀՀ ԿԳՄՍ փոխնախարար Արաքսիա Սվաջյանն մասնակցել է կրթության ոլորտում երեխաների պաշտպանության հայեցակարգերի ամրապնդումը սոցիալական պաշտպանության ոլորտի հետ համագործակցությամբ թեմայով քննարկմանը, որը կազմակերպվել է «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի շրջանակում՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ:

Միջոցառմանը մասնակցել է ողջունի խոսքով հանդես եմ եկել նաև ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանը, «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի գլխավոր հանձնակատար Արիստակես Մուրադյանը, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հայաստանյան առաքելության ներկայացուցիչ Մելինդա Վոյտոյանը, ներկայացուցիչներ ՀՀ ԵԳ ԵՍԿԵ նախարարություններից, ինչպես նաև Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնից, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունից, «Վորլդ Վիժն Հայաստան» ընկերությունից եւ այլ կառույցներից:

Արաքսիա Սվաջյանը, կարեւորելով «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» լայնածավալ ծրագիրը, անդրադարձել է հատկապես դպրոցների կարողությունների զարգացման բաղադրիչին: «Ծրագրի շրջանակում իրականացված հետազոտությունը եւս մեկ անգամ ցույց տվեց, որ դպրոցներում դեռևս առկա են պարտադիր կրթությունից դուրս մնացած կամ ռիսկի տակ գտնվող երեխաներ: Դպրոցներում դեռևս ակամատես ենք լինում բռնության, բուլիմի դեպքերի: Ընդ որում՝ դպրոցների ղեկավարներն ու աշխատակիցները սկզբնական շրջանում հերքում եւ բացառում են իրենց դպրոցներում նմանօրինակ դեպքերի առկայությունը: Մյուս կարևոր բաղադրիչներն ընտանիքով պայմանավորված իրավիճակներն են, երբ երեխաները հայտնվում են կյանքի դժվարին փուլերում»,- ասել է նա:

Միջոցառման ընթացքում տեղի է ունեցել նաև «Երեխաների հանդեպ բռնության կանխարգելում եւ արձագանքում» ուղեցույցի շնորհանդեսը: Ուղեցույցը պատրաստվել է ԿԳՄՍ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի հետ համատեղ՝ «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի շրջանակում: Ուղեցույցի նպատակն է աջակցել ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին տրամադրելով մասնագիտական նյութ, որը կօգնի նրանց հասկանալու, թե ինչ է երեխաների հանդեպ բռնությունը, որոնք են դրա մասին վկայող նշանները, պատկերացում կազմելու երեխաների պաշտպանության համակարգի եւ այն մասին, թե ինչպես արդյունավետ կերպով հայտնաբերել, արձագանքել եւ կանխարգելել երեխաների հանդեպ բռնության դրսևորումները:

«Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի շրջանակում 2023 թ. հունիսի 22-ից օգոստոսի 31-ը հանրակրթական 45 ուսումնական հաստատություններում անցկացվել են նաև «Երեխաների հանդեպ բռնության կանխարգելում եւ արձագանքում» թեմայով վերապատրաստման դասընթացներ, որոնք ավելի քան 870 մասնակից են ունեցել:

Նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը կարեւորել է այն համագանձը, որ ծրագրի շրջանակում իրականացված մյուս գործողությունները՝ վերապատրաստումների անցկացումը եւ ուղեցույցի մշակումը, իրականացվել են հենց Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից:

Միջոցառման շրջանակում տեղի է ունեցել նաև պանելային քննարկում պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման եւ ուղղորդման կարգի, կողմերի միջեւ համագործակցության ձեւաչափի եւ մեխանիզմների վերաբերյալ: Քննարկմանը մասնակցել են Արաքսիա Սվաջյանը, ԵԳՄ ՅԱԿԿԿ անչափահասների հան-



ցավորության եւ ընտանեկան բռնության կանխարգելման վարչության պետ Էդգար Պետրոսյանը, ՀՀ ԱՄՂՆ փոխնախարար Տաթևիկ Ստեփանյանը:

Արաքսիա Սվաջյանը տեղեկացրել է, որ ուսումնական հաստատություն չհաճախած կամ այնտեղ հաշվառված չլինելու դեպքում պարտադիր կրթությունից դուրս մնացած անձանց բացահայտելու համար Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը յուրաքանչյուր ուսումնական տարվա սեպտեմբեր եւ հունվար ամիսներին, համեմատելով բնակչության պետական ռեգիստրի եւ կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալները, ԿԳՄՍ նախարարությանը ներկայացնում է 6-ից մինչեւ 19 տարին չլրացած այն անձանց տվյալները, որոնք որել են հաստատությունում հաշվառված չեն: «Այս տարի արդեն հունվարին իրականացրել ենք այդ աշխատանքները եւ ուղարկել ենք համապատասխան մարմիններին: Այս աշխատանքները իրականացվում են, որպեսզի երեխաներին կարողանանք ուսումնական հաստատություններ հետ բերել: Երեխային կրթության մեջ ընդգրկելու հարցում նախաձեռնող պատասխանատու է ծնողը, ինչպես նաև ՏԻՄ-երը: Յուրաքանչյուր համայնք պետք է տիրապետի տեղեկատվությանը, թե իր համայնքում դպրոցահասակ երեխաներից քանիսն են դպրոց հաճախում, քանիսը չեն հաճախում կամ հաճախակի են բացակա-

յուն եւ ինչ պատճառով: Ծուրջ երկու տարի է՝ ԿԳՄՍ նախարարությունը ձեռնարկել է պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման եւ ուղղորդման աշխատանքները, մշակվել եւ հաստատվել է համապատասխան կարգը, որը լավարկվել է լրամշակվել է»,- ընդգծել է Արաքսիա Սվաջյանը:

Նրա խոսքով՝ առանձնացվել է երեխաների երկու խումբ. երեխաներ, որոնք կրթությունից դուրս են մնացել, այսինքն՝ երբեք չեն եղել ուսումնական հաստատություն չեն հաճախել, գրանցված չեն եղել, բայց դպրոցահասակ են: Երկրորդ խմբի երեխաները պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկի տակ են: Առաջ կանխարգելման գոտում գտնվող երեխաներն են, որոնց հետ անելիքները շատ են:

Անդրադառնալով պարտադիր կրթությունից դուրս մնացած ազգային փոքրամասնությունների երեխաների բացահայտման գործընթացին՝ Արաքսիա Սվաջյանը նշել է, որ շատ կարևոր է ազգային փոքրամասնությունների համայնքների հետ համագործակցությունը: Այս նպատակով ԱՄՆում ազգային փոքրամասնության ներկայացուցիչ պատգամավորների նախաձեռնությամբ քննարկումներ են կազմակերպվել:

Փետրվարի 1-ից գործարկվել է Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի մաս կազմող էլեկտրոնային նոր ենթահամակարգը, որով հնարավոր կլինի բացահայտել կրթությունից դուրս մնացած եւ ռիսկի տակ գտնվող երեխաներին: Համակարգը եւ այնտեղ բացված հայտերը հասանելի են նաև շահագրգիռ ու պատասխանատու կառույցներին՝ Խճանակալության եւ հոգաբարձության մարմին՝ ի դեմս համայնքի ղեկավարի, ԿԳՄՍ ու Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություններին, Կրթության մտազնական մարմինին, մարդկային աշխատակազմերին, Միասնական սոցիալական ծառայությանը եւ Ներքին գործերի նախարարությանը:

«Առողջ ապրելակերպ»

Ի՞նչ են դասավանդում դպրոցներում

«Արմենարես» լրատվական գործակալությունում տեղի է ունեցել մամուլի ասուլիս՝ նվիրված դպրոցներում առողջ ապրելակերպի դասավանդման պարտադիր խմբակների գործունեությանը, մասնավորապես՝ դասընթացների բովանդակությանը եւ ակնկալվող արդյունքներին: Ասուլիսի բանախոսներն էին Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոնի (ԿԶՆԱԿ) գնահատման, մշակման եւ զարգացման բաժնի պետ, «Առողջ ապրելակերպ» աշխատանքային խմբի ղեկավար Լուսինե Ալեքսանյանը, Երեւանի Մ. Հերացու պետական բժշկական համալսարանի հոգեբանության ամբիոնի դասախոս, հոգեբանական գիտությունների թեկնածու Նուրնե Վարդանյանը, «Արաքսիա» բժշկական համալիր-երեխաների եւ դեռահասների առողջության ինստիտուտի մանկաբույժ, դեռահասների առողջության ծրագրերի համակարգող Մարինա Մելքունովան:

«Առողջ ապրելակերպ» աշխատանքային խմբի ղեկավար Լուսինե Ալեքսանյանի խոսքով՝ դպրոցներում առողջ ապրելակերպ թեման դասավանդվում է 2007 թվականից 8-11-րդ դասարաններում՝ «Ֆիզկուլտուրա» առարկայի դասաժամի հաշվին՝ որպես պետական պարտադիր դասընթաց, եւ վերարտադրողական առողջությանը վերաբերող թեմաները գրեթե ամբողջությամբ ընդգրկված են նաև այսօրվա ծրագրում: «Նոր չափորոշիչ կազմման արդյունքում

անհրաժեշտություն առաջացավ առողջ ապրելակերպի դասավանդումը սկսել 5-րդ դասարանում, որովհետեւ տարրական դպրոցում դրա վերաբերյալ թեմաներ կան «ես եւ շրջակա աշխարհը» առարկայի շրջանակում, եւ որպեսզի անջրպետ չառաջանա մինչեւ 8-րդ դասարան, որովհետեւ այն դասավանդել խմբակի ձևով: Եվ այնպես էր ստացվում, որ դեռահասության բարձր շրջանում ոչ մի վերջնարդյունք չէր իրականանում միտված առողջ ապրելակերպին: Իսկ այդ տարիքում վարչապետի մի շարք խնդիրներ են առաջանում, որոնք ճիշտ ուղղորդման կարիք ունեն», - ասել է բանախոսը:

Ըստ Լուսինե Ալեքսանյանի՝ մշակվել է «Առողջ ապրելակերպ» դասավանդողների կարողունակությունների ցանկ, ըստ որի՝ ուսուցիչը պետք է դասն անցկացնի փոխադարձ հարգանքի միջավայրում, կարողանա անկեղծանալ եւ բաց լինել երեխաների համար՝ վստահություն ներշնչելով: «Իհարկե, դժվար է վերահսկել ունի՞ մանկավարժն այդ հատկությունները, թե՞ ոչ, բայց պարբերական մշտադիտարկումների արդյունքում պետք է հասկանանք՝ որտեղ բաց կա, ինչ խնդիրներ են արձանագրվում եւ զննել լուծման ճանապարհով: Տարբեր փուլերով ընտրվել են 100 մենթորներ, որոնց թվում են նաև հոգեբաններ: Նրանք վերապատրաստվել են, եւ նրանց մեծ մասն արդեն պատրաստ է դասավանդում իրականացնելու», - ասել է նա:

Թեմայի բովանդակությանն անդրադարձել է «Արաքսիա» բժշկական համալիր-երեխաների եւ դեռահասների առողջության ինստիտուտի մանկաբույժ, դեռահասների առողջության ծրագրերի համակարգող Մարինա Մելքունովան:

«Ծրագիրը երկու տարի փորձարկվել է Տավուշի մարզում եւ դրական արձագանք ստացել թե՛ ուսուցիչների, թե՛ ծնողների շրջանում: Նույնիսկ ղեկավարներն են, որ առաջնորդվելով թեմայով սահմանված վարժարաններով ծնողը եւս հրաժարվել է ծխախոտի օգտագործումից: Խմբակի համար դասագիրք չկա, միայն ուսուցիչ ձեռնարկն է: Տավուշում փորձարկումից հետո ձեռնարկները վերանայվել են, եւ այսօր դրանք ներդրվել են ՀՀ բոլոր դպրոցներում», - ասել է Մարինա Մելքունովան:

Ըստ բանախոսի՝ թեմաներն ուղղված են անձի զարգացմանը, անվտանգությանը, առաջին օգնությանը, վնասակար ազդեցություններից խուսափելու կարողություններին: «5-7-րդ դասարանում ներառված են թեմաներ առողջ սննդի, անվտանգության ինքնաճանաչման, հակածխախոտային պայքարի, առողջ փոխհարաբերությունների կառուցման, բուլիմի մասին: Կան նաև թեմաներ, որոնք վերաբերում են բռնությանը, վերարտադրողական առողջությանը, որոնք խիստ համապատասխանեցված են տվյալ դասարանի երեխայի տարիքային առանձնահատկություններին:

Դասընթացի նպատակն է զինել երեխաներին գիտելիքով եւ պատրաստել կյանքին»:

Այս համատեքստում Երեւանի Մ. Հերացու պետական բժշկական համալսարանի հոգեբանության ամբիոնի դասախոս, հոգեբանական գիտությունների թեկնածու Նուրնե Վարդանյանի գնահատմամբ՝ մեծ ձեռքբերում է այն փաստը, որ դպրոցում երեխաները կարողանում են խոսել հոգեկան առողջության թեմաների մասին: «Այսօր, ցավոք սրտի, չենք կարող վերահսկել, թե ինչ ինֆորմացիա են ստանում երեխաները համացանցի անսահմանափակ հնարավորություններից, եւ նրանց պաշտպանելու միակ միջոցը գրազետ տեղեկություն փոխանցելն է, ինչն էլ արվում է այս խմբակի միջոցով», - ասել է հոգեբանը:

Բանախոսների նշմամբ՝ բոլոր ձեռնարկներում նախաբանը նույնն է. ներկայացված են թեմաները, ընդգրկվողները, հիմնական գաղափարները, որոնց վրա հիմնված է ծրագիրը: Դա ներածական հատվածն է, որն ուղղված է ուսուցչին, իսկ երեխաներին տրամադրվում են իրենց համար նախատեսված բաշխման նյութերը, որոնք յուրաքանչյուր դասի համար առանձնացված են: Կարեւորվել է նաև այն հանգամանքը, որ դասընթացը սկսելուց առաջ մանկավարժները ծնողական ժողով հրավիրեն, ներկայացնեն խմբակի բովանդակությունը, պարզաբանեն անելիքները:

Կարիերայի ուղղորդման նոր նշանող. քանակական արդյունքներից անցում՝ որակականի

Կարիերայի զարգացման ազգային համակարգում ՄԿՈՒ ոլորտն այն եզակի ուղղություններից է, որտեղ մասնագիտական կողմնորոշման եւ կարիերայի ուղղորդման ծառայությունները լիարժեք ներդրված են եւ համակարգվում են ազգային մակարդակում: Դեռեւս 2013 թվականից Եվրոպական կրթական հիմնադրամի (ԵԿԳ/ETF) խորհրդատվական աջակցությամբ իրականացված փորձնական միջոցառումների արդյունքում արձանագրված հաջողված փորձերն ու արդյունավետությունը հիմք ընդունելով՝ ՀՀ պետական բյուջեից միջոցներ նախատեսվեց 2018-2020 թթ. հանրապետության բոլոր ՄԿՈՒ հաստատություններում մասնագիտական կողմնորոշման եւ կարիերայի ուղղորդման մեկական մասնագետի հաստիքի հատկացման համար:

ՄԿՈՒ ոլորտում մասնագիտական կողմնորոշման եւ կարիերայի ուղղորդման ծառայությունների շուրջ գրուցել ենք Մասնագիտական կողմնորոշման եւ կարողությունների զարգացման կենտրոնի ղեկավար **Հայկուհի Գեորգյանի** հետ:

- Խնդրում ենք, ներկայացրե՞ք Մասնագիտական կողմնորոշման եւ կարողությունների զարգացման կենտրոնի գործունեությունը ՄԿՈՒ ոլորտում:

- Մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտն այն բնագավառներից է, որտեղ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի եւ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունների համատեղ ու փոխգործուն աշխատանքներն ուղղված են ՄԿՈՒ հաստատությունների շրջանավարտների տնտեսական ակտիվությանը, աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանն ու զբաղվածության աջակցությանը: Երկու նախարարությունների համագործակցությունը կամրջող կառույցը Մասնագիտական կողմնորոշման եւ կարողությունների զարգացման կենտրոնն է, որը գործում է ԱՄՀ նախարարության համակարգում: Այն ստեղծվել է նախ որպես երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն, հետո վերակազմակերպվել մեթոդական կենտրոնի, երբ 2012թ. ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվեց «ՀՀ-ում մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացման հայեցակարգը»: Կենտրոնը ներկայում շարունակում է իր գործունեությունը որպես ազգային կառույց՝ ապահովելով մասնագիտական կողմնորոշման եւ կարիերայի ուղղորդման մոդելների եւ մեթոդաբանության մշակման եւ ներդրմանն աջակցության, համապատասխան մասնագետներին մեթոդական խորհրդատվության եւ կարողությունների շարունակական զարգացման ուղղությամբ աշխատանքները: ՄԿԿԶ կենտրոնի հիմնական առաքելությունն է ողջ կյանքի ընթացքում անձի կարիերայի ուղղորդման ազգային համակարգի զարգացումը: Այդ նպատակով մենք աշխատում ենք ինչպես համակարգողական եւ ՄԿՈՒ համակարգողական, այնպես էլ կրթությունից դուրս հաստատություններում մասնագիտական կողմնորոշման եւ կարիերայի ուղղորդման ծառայությունների ներդրման ուղղությամբ: ՄԿՈՒ հաստատություններում կարիերայի ուղղորդման աշխատանքները համակարգված են եւ գնահատելի, քանի որ ունեն ինստիտուցիոնալ հիմքեր՝ կանոնակարգ, մասնագետի պաշտոնի անձնագիր, մեթոդաբանություն եւ մշտադիտարկման ուղղություններ: Մասնագիտական կողմնորոշման եւ կարիերայի ուղղորդման մասնագետի պաշտոնի նկարագրում հստակ ամրագրված են նրա գործառնությունները՝ առանձնացված երեք ուղղությամբ՝ կարիերայի ուղղորդման տեղեկատվախորհրդատվական աշխատանքներ, աջակցություն զբաղվածության ապահովմանը եւ վարչական աշխատանքների կատարում, այն է՝ տեղեկատվության հավաքագրում, ուսանողների կարիերայի ուղու վերաբերյալ վիճակագրության կազմում, համապատասխան ժամկետներում մշտադիտարկման գեկույցների կազմում եւ նախարարություն ներկայացում: Մասնագիտական կողմնորոշման եւ կարիերայի ուղղորդման մասնագետների աշխատանքը սկսվում է մինչ ընդունելությունը, երբ հանրակրթական դպրոցների հետ համագործակցությամբ ապահովվում են աշակերտների իրազեկումը, կազմակերպում այցելություններ քոլեջ կամ ուսումնարան, վարպետաց դասեր, նաեւ անհատա-

կան խորհրդատվություն ծնողների ու ապագա դիմորդների հետ: Անցկացնում են նաեւ ոչ ֆորմալ ուսուցման դասընթացներ կարիերայի կառավարման հմտությունների զարգացման նպատակով:

- ՄԿՈՒ ոլորտում մասնագիտական կողմնորոշման եւ կարիերայի ուղղորդման աշխատանքներն ի՞նչ ընթացք են ունեցել:

- Ընդհանուր առմամբ՝ ՄԿԿԶ կենտրոնի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքում 2018-2020 թթ. բոլոր ՄԿՈՒ հաստատությունների շրջանավարտների 97.34%-ն ուսումնառության ողջ ընթացքում ներգրավված է եղել կարիերայի ուղղորդման տարբեր ծառայություններում: Վերջին տվյալներով 2021-2022 թթ. շրջանավարտների 40%-ից ավելին ավարտելուց հետո զբաղված է իր մասնագիտությամբ: 2022 թ. ՄԿՈՒ համակարգում մասնագիտական կողմնորոշման եւ կարիերայի ուղղորդման աշխատանքների վերազնահատման տարի էր: ՄԿՈՒ համակարգում կարիերայի ուղղորդման նոր նշանող է սահմանվել քանակական արդյունքներից անցում կատարել որակականի: Հրապարակվել են նաեւ ԵԿԳ-ի եւ Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից իրականացված Կարիերայի զարգացման Հայաստանի ազգային համակարգի մասին ամփոփ զեկույցները: Դրանցում եւս արձանագրվեց Հայաստանում ՄԿՈՒ ոլորտում կարիերայի ուղղորդման ծառայությունների ներդրման հաջող փորձը եւ տարածաշրջանի նյութ երկրների համեմատ զգալի առաջընթացը: ՄԿԿԶ կենտրոնը կարելու է ՄԿՈՒ կարիերայի պատասխանատուների շարունակական հարցողակցումն ու փորձի փոխանակումը, կարողությունների զարգացումը: Հանրապետության բոլոր քոլեջների եւ ուսումնարանների կարիերայի խորհրդատուները, շուրջ 100 մասնագետ, պարբերաբար հանդիպում են: Քննարկելու շատ թեմաներ կան կարիերայի զարգացման համակարգի նոր մարտահրավերներից մինչեւ յուրաքանչյուր հաստատությունում կարիերայի ուղղորդման գործառնությունների իրականացումը եւ որակական արդյունքների գնահատում: Ցավալի է արձանագրել, որ մեծ է կադրերի հոսունությունը: ՄԿԿԶ կենտրոնը պարբերաբար հետեւում է մասնագետների փոփոխություններին եւ քայլեր ձեռնարկում ներգրավված ներ մասնագետների կարողությունների զարգացման ուղղությամբ, որպեսզի շարունակվի ուսանողների հետ կարիերայի ուղղորդման բնականաբար աշխատանքը:

- ՄԿՈՒ հաստատություններում կարիերայի ուղղորդման ծառայությունների ինստիտուցիոնալ ներդրումից հետո, բնականաբար, հաջորդ կարելու խնդիրը ծառայությունների որակական արդյունքների ապահովումն է: Սահմանված նոր նշանողը օրինակ է նաեւ տարածաշրջանային երկրների համար, ինչի մասին խոսվել է 2022 թ. նոյեմբերին առաջին անգամ կազմակերպված Կարիերայի համաշխարհային ամսվա միջոցառումների շրջանակում: Կարիերայի համաշխարհային ամսվա միջոցառումները կազմակերպվել էր Կարիերայի ուղղորդման



միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից, որում ներգրավված են այնպիսի հեղինակավոր կառույցներ, ինչպիսիք են՝ Cedefop, Եվրոպական համաձայնագրով, Եվրոպական կրթական հիմնադրամ (ETF), Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ՄԿԿ), Տնտեսական համագործակցություն եւ զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ), ՅՈՒՆԵՍԿՕ եւ Համաշխարհային բանկ: Միասնակի ընթացքում իրականացվել են մի շարք համաշխարհային եւ տարածաշրջանային միջոցառումներ՝ համագործակցելով կարիերայի ուղղորդման ոլորտի ազգային եւ տարածաշրջանային կառույցների հետ: Միջոցառման հիմնական նպատակն էր արագ փոփոխվող աշխատաշուկայի ներկա պայմաններում կարելու էր կարիերայի ուղղորդումը որպես կառավարությունների կողմից վարվող քաղաքականության առաջնահերթություն, քանի որ այն օգնում է անհատներին արժեւորելու իրենց ներուժը, տնտեսություններին՝ արագ արձագանքելու փոփոխություններին եւ հասարակություններին՝ լինելու ավելի արդար: Մեկ ամիս համաշխարհային մասնագիտական կազմակերպությունները խոսել են կարիերայի զարգացման համակարգերի մասին:

- Ինչպիսի՞ն էր Կարիերայի համաշխարհային ամսվա միջոցառումները Հայաստանի ներգրավվածությունը:

- Հայաստանը՝ ի դեմս ՄԿԿԶ կենտրոնի եւ ՄԿՈՒ կարիերայի մասնագետների մեծ ընտանիքի, առաջարկվել է համակարգելու միջոցառման տարածաշրջանային օրակարգը՝ որպես կարիերայի զարգացման համակարգի առաջավոր փորձ եւ ակտիվ ներգրավվածություն ունեցող երկիր: Հայաստանի հաջողված փորձը, համակարգի ներդրման եւ իրականացման մոդելը եզակի են միջազգային պրակտիկայում: Օրինակ՝ Կրասնոսնովսկայն մեթոդ է մի քանի քոլեջներում տարբեր ծրագրերով, ԱՊՀ երկրներում եւս ոչ մի տեղ չկա, որ բոլոր քոլեջներում այն ներդրված լինի՝ նույն մեթոդաբանությամբ ու գործիքակազմով, ունեն մշտադիտարկման կանոնավոր գործընթաց, մեթոդական աջակցության ազգային կենտրոն, որն, այսպես սասած հետեւի ՄԿՈՒ զարկերակի աշխատանքին ու, ըստ անհրաժեշտության, արագ արձագանքի խնդիրներին եւ զարգացման նոր հնարավորություններ ստեղծի: Այդ առումով Հայաստանը, իրոք, մոդելային է, որտեղ այն ներդրված է ինստիտուցիոնալ մակարդակում: ՄԿԿԶ կենտրոնը նաեւ կարիերայի խորհրդատուների մի մեծ ընտանիք է, որի անդամներն արդեն իրենց փորձով են կիսվում կարիերայի խորհրդատուների համաշխարհային համայնքի հետ: Կարիերայի Համաշխարհային ամսվա միջոցառումների շրջանակում հանրապետության գրեթե բոլոր ՄԿՈՒ հաստատությունների մասնագիտական կողմնորոշման եւ կարիերայի ուղղորդման մասնագետները մասնակցել են միջազգային վեբինարներին: Հարստությամբ պետք է փաստեն, որ այդ միջոցառմանը որպես բանախոս ներկայացրեցինք նաեւ քոլեջներից երկու կարիերայի խորհր-

դատու, ովքեր իրենց փորձով կիսվեցին միջազգային պոռթապատերի եւ վեբինարների ընթացքում: Պատահական չէր նաեւ մեր կողմից առաջարկված թեման «ՄԿՈՒ ոլորտում կարիերայի ուղղորդման քանակական արդյունքներից անցում որակականի»:

- Որո՞նք են ՄԿՈՒ համակարգում մասնագիտական կողմնորոշմանը եւ կարիերայի զարգացմանն ուղղված 2024 թվականի առաջնահերթությունները:

- Որակական արդյունքներ ապահովելու համար դեռ շատ անելիքներ կան, հետեւաբար ՄԿԿԶ կենտրոնը 2024 թ. նախանշել է նոր ուղղություններ: Մասնավորապես՝ որպես առաջնահերթություն է սահմանվել միջհամակարգային կապերի հաստատումը՝ ՄԿՈՒ հաստատությունների եւ դպրոցների համագործակցության ամրապնդումը, որպեսզի վերջիններս աշխատեն միասին, այլ ոչ թե լինեն մրցակիցներ: Այդ նպատակով աշխատանքներ են տարվել մի շարք մարզերում՝ համախմբելու դպրոցներում մասնագիտական կողմնորոշման ակումբ-դասընթաց վարող մանկավարժներին եւ քոլեջների կարիերայի ուղղորդման մասնագետներին: Մշակվել է համատեղ միջոցառումների ծրագիր, որն ամփոփվել է քոլեջներում բաց դռների նախաձեռնությամբ: Միջոցառման շրջանակում ներկայացվել են առկա մասնագիտությունները, ընդունելության կարգը, աշխատաշուկայում պահանջարկը, զերազանց եւ լավ առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների կրթությունը առկա եւ հեռակա ուսուցմամբ շարունակելու հնարավորության վերաբերյալ, կարիերայի զարգացման հնարավոր հեռանկարները եւ այլն: Եղել են նաեւ փոխայցելություններ, իրականացվել են վարպետաց դասեր: Կարելու է ՄԿՈՒ հաստատություններում ներդրված նոր մասնագիտությունների մասին իրազեկման ակտիվացումը: Ցավոք, նախորդ տարիներին ունենք փորձեր, երբ աշխատաշուկայում պահանջված մասնագիտությամբ կրթություն ստանալու հնարավորություն է ստեղծվում քոլեջում, սակայն դիմորդների բանակը շատ ցածր է: Պատճառներից մեկն էլ իրազեկվածության պակասն է: Հաջորդ մարտահրավերը, որին փորձում ենք ընդառաջ գնալ, նոր տեխնոլոգիական գործիքների մշակումն ու ներդրումն է կարիերայի ուղղորդման աշխատանքներում: Այս ուղղությամբ առաջին փորձն արվեց Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Մասնավոր հատվածի զարգացում եւ ՄԿՈՒ Հարավային Կովկասումն օրագրի շրջանակում: Համատեղ մշակվեց վիրտուալ իրականության (VR) տեխնիկայով հյուրանոցային գործիք կառավարման զբաղմունքների մասին առաջին ծրագիրը: Գործիքի կիրառմամբ, ըստ զբաղմունքների առաջարկված դեպքերին վիրտուալ մասնակից լինելով՝ աշակերտն ու ուսանողը կարող են իրական միջավայրում տեսնել մի քանի մասնագիտություններով զբաղմունքի առանձնահատկությունները, ներկայացվող պահանջները, աշխատանքային իրավիճակներում աշխատակցի վարքագիծը եւ այլն: Բացի դրանից՝ ավանդական են դարձել երեւանյան եւ մարզերում կազմակերպվող կարիերայի եւ աշխատանքի տոնավաճառները, որոնց ակտիվ մասնակցություն ունեն ՄԿՈՒ հաստատությունների կարիերայի ուղղորդման մասնագետները՝ ապահովելով ուսանողների եւ կամավորներ մասնակցություն, կազմակերպելով վարպետաց դասեր աշակերտների համար եւ այլն: Բազմաթիվ են ՄԿՈՒ հաստատությունների ուսանողների հաջողված պատմությունները, երբ տոնավաճառներից հետո ստանում են պրակտիկայի, աշխատանքի, արտերկրում ուսուցման առաջարկներ գործատուներից եւ կազմակերպիչներից:

շարունակությունը էջ 6

Հայ կատարողական արվեստի երախտավորներ

խոշորագույն արտիստուհի՝
մեծ սրտի եւ անբեկանելի կամքի տեր
Հայկանուշ Դանիելյանի ծննդյան 130-րդ տարեդարձի առթիվ

Մեծն Կոմիտասը, ով վոկալ կատարողական արվեստի նոր դպրոցի ամենափայլուն ներկայացուցիչն է եւ այդ դպրոցի հիմնադիրը գրում է. «ժողովրդի երգեցողությունը դա մի ինքնուրույն դպրոց է, ուր դաս կարող են առնել ամենքը, ամեն ժամանակ, երբ դրա կարիքն են գզում»:

Հայկանուշ Բաղդասարի Դանիելյանն իր երգային արվեստը կատարելագործելիս ելակետ է ընդունել հենց Կոմիտասի այս ձեռնարկը:

Երգչուհին ծնվել է 1893թ. դեկտեմբերի 3-ին, Թիֆլիսում: Յոթ տարեկանից երգել է հայկական եկեղեցու երգչախմբում: 18 ամյա Հայկանուշը ավարտելով Թիֆլիսի իգական գիմնազիան, մի քանի արվեստասեր մարդկանց նյութական աջակցությամբ, մեկնում է Պետրոգրադ եւ ընդունվում կոնսերվատորիա՝ պրոֆեսոր Ն.Ա.Իրացկայայի վոկալ-մասնագիտական դասարանը:

Հ.Դանիելյանը փայլուն ավարտելով Պետրոգրադի կոնսերվատորիան ստանում է ազատ արվեստագետի դիպլոմ:

Կոնսերվատորիայի ռեկտոր, ռուս մեծանուն կոմպոզիտոր Գլազունովը Հայկանուշ Դանիելյանի դիպլոմը հանձնելու ժամանակ ասել է. «Կոնսերվատորիայի գոյության այս տարիների ընթացքում Դուք առաջինն եք, որ դուրս գալով մեր հաստատությունից վերցրել եք այն ամենը, ինչ կարող էր տալ կոնսերվատորիան: 1919-20 ուս. տարվա շրջանավարտներից Դուք միակն եք, ում պետական քննական հանձնաժողովը զննահատել է 5+ (խաչ)»:

Պետրոգրադի կոնսերվատորիան ավարտելուց հետո երգչուհին երկու տարի երգել է երաժշտական կոմեդիայի թատրոնում, այնուհետեւ տասը տարի 1922-32թթ. Թիֆլիսի օպերային թատրոնում:

Բնատուր գեղեցիկ ծայր քնարական-կոլորատուրային սուպրանո. լայն ձայնածավալ, ինտոնացիոն բույուրեղյա մաքրություն եւ հստակություն, վիրտոզ կատարողականություն եւ փայլուն տեխնիկա, մարդկային ակամջը շյոյոլ հաճելի տեմբր՝ ահա այս հատկանիշներն են, որ բնորոշում են Հայկանուշ Դանիելյանի բարձր պրոֆեսիոնալ, կատարողական արվեստի էությունը:

1933թ. երեւանում բացվում է օպերային թատրոնը: Հ.Դանիելյանը հրավիրվում է Հայաստան եւ երեւանի օպերային թատրոնի բեմում ավելի քան 35 տարի իր արտիստական գործունեության ընթացքում հետաքրքիր ստեղծագործական ճանապարհ է անցնում, արդեն Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնում կերտելով ավելի քան երկու տասնյակ օպերային դերերգեր: Անուշ, Օլիմպիա, Ռոզինա, Դեզդեմոնա, Լակնե, Մադամ Բատերֆլայ, Միմի...

Երբ 1939թ. Մոսկվայում կայացավ Հայաստանի արվեստի եւ գրականության առաջին տասնօր-



յակը, Մեծ թատրոնում Հայկանուշ Դանիելյանը հանդես եկավ Անուշի դերերգով Արմեն Տիգրանյանի համանուն օպերայում:

Հայ մեծանուն ռեժիսոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Ռուբեն Սիմոնովը գրեց, «Անուշի խորը դրամատիզմով եւ մեծ ուժով Հ.Դանիելյանի կերտած կերպարը գերեց խստապահանջ մոսկովյան ունկնդրին»:

Իսկ Հ.Դանիելյանին ժամանակակից Մեծ թատրոնի առաջատար երգչուհի, ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի Բարսուկան այսպես է բնութագրում. «Մեր բազմազգ արվեստի ամենագեղեցիկ, ամենալուսավոր անուններից մեկն է, մեծ սրտի եւ անբեկանելի կամքի տեր խոշորագույն արտիստուհի, այս կինը, որի անունն է Հայկանուշ Դանիելյան»:

Եվ պատահական չէր, որ երգչուհին Անուշի լիրիկական-ողբերկական կերպարի կերտման համար արժանանում է ԽՍՀՄ ժողովրդական արտիստի կոչման:

Հայրենական Մեծ պատերազմի օրերին՝ 1944թ. փետրվարին, Հայկանուշ Դանիելյանը հրավիրվում է Մոսկվայի Մեծ թատրոն, մարմնավորելու Միխայիլ Գլինկայի «Իվան Սուսանին» օպերայում գլխավոր հերոսուհու Անտոնիդայի դերերգը ռուսական օպերային արվեստի վարպետների հետ:

Այդ դերերգի բարձրարվեստ կատարման համար երգչուհին արժանանում է Ստալինյան մրցանակի: Դա այն ժամանակի համար արվեստագետին տրվող ամենաբարձր պարգևն ու զննատականն էր:

Երաժշտագետ, հասարակական-մշակութային գործիչ Սամսոն Գասպարյանը իր «Սովետահայ բեմի վարպետները» խորագիրը կրող գրքում, իբրեւ գրքի առաջաբան բերում է նշանավոր ռուս գործիչ Վ. Նեմիրովիչ-Պանչելոյի հետեւյալ բնորոշումը՝ «Ի՜նչ հոյակապ երգչուհի է Հայկանուշ Դանիելյանը»:

Կոմիտասի ստեղծագործությունների կատարման հմայքն ու գեղեցկությունը նրա պարզ, անբռնազբոս, ճշմարտացի եւ խորապես ազգային երանգներով տոգորված արտահայտիչ երգեցողության մեջ էր մեծանուն Հայկանուշ Դանիելյանի ֆենոմենը:

Մի ֆենոմենը:

Հենց այդ սկզբունքներն ու ավանդությունները հիմք դարձան մեր շատ հայ երգիչ-երգչուհիների արվեստի համար: Եվ կոմիտասյան երգեցողության հետեւորդները եղան նշանավոր հայ երգիչներ Արմենակ Շահմուրադյանը, Մարգարիտ Բաբայանը, Տիգրան Նալբանդյանը, իսկ ավելի ուշ՝ Արմենակ Տեր-Աբրահամյանը, Հայկանուշ Դանիելյանը, Շարա Տայանը, Տաթևիկ Սազանդարյանը, Գոհար Գասպարյանը եւ ուրիշներ:

Լսելով հանրային ռադիոյի ոսկե ֆոնդում պահպանված Հ.Դանիելյանի կոմիտասյան անգուզական կատարումները՝ հանոզվում են դրանում: Առավել խորությամբ եւ հուզական են հնչում Կոմիտասի «Չինար ես», «Ծիրանի ծառ», «Քելե, քելե», «Ալազյազ բարձր սարին», «Քելեր-ցուրեր», «Էս առուն» «Ծիծեռնակը», Ալ.Սպենդիարյանի «Սիրուհիս», Ռ.Սելիքյանի «Կաքավիկ», «Շափաղ կուտաս» ռոմանսները:

Իսկ երբ լսում ես Հ.Դանիելյանի կատարմամբ ռուս դասականներ Ս.Ռախմանինովի, Ա.Գլազունովի, Պ.Չայկովսկու ռոմանսները, դժվարանում ես զնահատել, որ հեղինակի երկն է լավ կատարում հայ, ռուս թե արեւմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործությունները:


Հայկանուշ Դանիելյանի երգեցողությունն առանձնացել է գեղարվեստական կատարողականությամբ եւ հազվագյուտ վարպետությամբ:

Հ.Դանիելյանի գործունեության վերջին տարիների փայլուն էջերից պետք է համարել մանկավարժական աշխատանքը կոնսերվատորիայում՝ (1943-51թթ. պրոֆեսոր 1949 թվականից) եւ Պ.Չայկովսկու անվան երաժշտական մասնագիտական դպրոցում իր դիրեկտորական աշխատանքներին զուգընթաց (1949 թվականից 1952 թվականը) զգուշությամբ եւ խնամքով զբաղվում էր աչքի ընկնող տվյալներ ունեցող երեխաների ծայրի պահպանմամբ եւ մշակմամբ, ինչպես նաեւ սկսնակ մանկավարժ-երգիչներին հաղորդելով իր արվեստի հարուստ փորձն ու գիտելիքները: Մանկավարժն իր սաների մեջ զարգացնում էր գեղագիտական ճաշակ, սեր էր արթնացնում երաժշտության նկատմամբ:

ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր Հայկանուշ Բաղդասարի Դանիելյանը հսկայական ավանդ ունի հայ դասական վոկալ դպրոցի ձեւավորման եւ նաեւ հայ վոկալ կատարողական արվեստը Հայաստանում եւ նախկին Խորհրդային միությունում բարձր պրոֆեսիոնալ մակարդակով ներկայացնելու ասպարեզում:

Դավիթ ՂԱԶԱՐՅԱՆ
Հայկական երաժշտական ընկերության նախագահ, պրոֆեսոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ

Գագիկ ԳԻՆՈՍՅԱՆ



ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը ցավով տեղեկացնում է, որ 2024 թ. փետրվարի 6-ին 58 տարեկանում կյանքից հեռացել է Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործիչ, ազգագրական պարերի մասնագետ, ՀՀ ԿԳՄՍ «Գեղարվեստական դաստիարակության եւ մշակույթի մանկապատանեկան կենտրոնի» պարուսույց, «Կարին» ավանդական երգի-պարի խմբի հիմնադիր եւ ղեկավար

Գագիկ Մարտիրոսի Գինոսյանը:
Գագիկ Գինոսյանը ծնվել է 1966 թվականի օգոստոսի 3-ին, Վրաստանի Ախալցխա քաղաքում: 1982 թվականին, ավարտելով տեղի հ. 3 հայկական միջնակարգ դպրոցը, աշխատանքի է անցել Ախալցխայի շարժական մեխանիզացված շարայունում՝ որպես բանվոր: Նույն թվականին ընդունվել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի «Տեխնիկական կիրառական» ֆակուլտետի «Ավտոմատիկա եւ հեռուստամեխանիկա» բաժնը, որն ավարտել է 1990 թվականին:

1987 թվականից Գագիկ Գինոսյանը սկսել է պարել Հայրիկ Մուրադյանի հիմնադրած «Վան» ազգագրական խմբում: 1996-1999 թվականներին աշխատել է Գյումրու «Շանթ» հեռուստառադիո ընկերության երեւանյան գրասենյակում որպես տնօրեն:

2001 թվականին Գագիկ Գինոսյանը հիմնադրել է «Ծովակ» եւ «Կարին» ավանդական երգի-պարի խմբերը: 2011 թվականին «Ազգային պարարվեստի զարգացման եւ տարածման գործում ունեցած զգալի ավանդի համար» Գագիկ Գինոսյանը պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով:

2007 թվականին հիմնել է «Ազգագրության թատրոնը» եւ ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ՝ «Կարին» ավանդական երգի-պարի խմբի հետ բեմադրել իր հեղինակած եւ Հայրիկ Մուրադյանին նվիրված՝ «Հայոց երգի հայրիկը», «Խնկահոտ Էրզրը» եւ «Վարք հայոց» ներկայացումները: 2014 թվականին բեմադրել է «Խաչ պատերազմի» հեղինակային ներկայացումը:

Ավանդական երգերի եւ պարերի պահպանման, մշակման եւ հանրայնացման նպատակով հիմնադրել է «Ազգային երգ ու պարի ակադեմիա» կրթամշակութային հիմնադրամբ: Պետական աջակցությամբ հեղինակել է «Ազգային երգ ու պար» առարկայական ծրագիրը, որը տարիներ շարունակ ուսուցանվել է հանրակրթական դպրոցներում:

Երկար տարիներ զբաղվել է բանահավաքչական գործունեությամբ: Գրի է առել բազում պարերի նկարագրություններ եւ վերականգնել 36 ազգային պար, որոնց առաջին կատարողն է եղել «Կարին» համույթը: Հայաստանի անկախության 20-ամյակի կապակցությամբ՝ Գագիկ Գինոսյանը ՀՀ նախագահի հրամանագրով արժանացել է ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ կոչմանը: Տարբեր տարիների արժանացել է ՀՀ պետական, գերատեսչական պարգևներին:

Մասնակցել է Արցախյան պատերազմին: 2006 թվականին լույս է տեսել Գ.Գինոսյանի անդրանիկ «Ողջոյն, տղերք» գիրքը, որում ընդգրկված են հեղինակի արձակ բանաստեղծությունները, աֆորիզմները, ինչպես նաեւ հրապարակախոսական հոդվածներն ու նյութերը Արցախյան պատերազմի մասին:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը իր խորին վշտակցությունն է հայտնում Գագիկ Գինոսյանի ընտանիքի անդամներին, հարազատներին, ընկերներին եւ գործընկերներին, նրա արվեստը զննատողներին եւ երկրպագուներին:

* * *

Գագիկ Գինոսյանի հոգեհանգստի արարողությունը տեղի ունեցավ Երեւանի Նոր Նորքի Սուրբ Սարգիս եկեղեցում: Վերջին հրաժեշտը տրվեց Երեւանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը: Հուղարկավորությունը կատարվեց «Շաքրլուր» զինվորական պանթեոնում՝ յուրահատուկ, աննախադեպ, արժանի արարողությամբ:

Գրախոսություն

Ոչ միայն հայագիտական, այլև ընդհանուր լեզվաբանական կարելուր նշանակությամբ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի «Գիտություն» հրատարակչությունը լույս է ընծայել Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի ղեկավար բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լալիկ Խաչատրյանի «Հին հայերենի քերականական համակարգի տիպաբանությունը» մենագրությունը:

Աշխատանքում քննարկվում են հին հայերենի քերականական համակարգի տիպաբանության խնդիրները՝ ըստ լեզվական մակարդակների: Հեղինակը հին հայերենի շրջանակներում քերականական համակարգի տիպաբանությունը դիտարկում է երեք պատմական, տարածամասնային եւ համաժամանակյա կտրվածքներով:

Պատմական հայեցակետով քննվել է դասական հայերենի ձեւաբանաշարահյուսական մակարդակների փոփոխությունների ընթացքը 7-13-րդ դարերում՝ հետեւելով հետազոտական եւ նախամիջին հայերենի ենթափուլերի լեզվափոփոխումներին: Ըստ այդմ՝ ցույց են տրվել համակարգային այն փոփոխությունները, որոնք արձանագրված են նշված դարաշրջանների պատմիչների երկրում:


Ամփոփելով 7-13-րդ դարերի հայերենի լեզվափոփոխումների նկարագրությունը՝ հեղինակն առանձնացնում է տիպաբանական որոշակի չափանիշներ, որոնք նախամիջին հայերենի ենթափուլի վերջում աստիճանաբար կայունանում են, ինչպես՝ հոլովման համակարգում ներքին թեքման մասնակի վերացում, վերլուծական հոլովածների քայքայում եւ անցում կցականության, խառը տիպի հոլովման քայքայում եւ անցում պարզ հոլովման, խոնարհման վերլուծական ձեւերի առաջացում, հավաքական գոյականների անցում եզակի նշանակության, նախա դասության անդամների համաձայնության խախտում, հոլովական համակարգում -ում եւ -ով մասնիկների կայունացում եւ այլն:

Տարածամասնային հայեցակետով քննվել

է հին հայերենի ձեւաբանական եւ շարահյուսական մակարդակների տիպաբանական հատկանիշների փոփոխությունների ընթացքը ընդհանուր հայերենում, եւ ցույց են տրվել դրանց (փոփոխությունների) դրսեւորումներն արդի հայերենում: Ձեւաբանական մակարդակում փոփոխություններ են կատարվել հոլովական եւ խոնարհման համակարգերում: Շարահյուսական հարցերը քննելիս դիտարկվել են շարահյուսական եւ նախադասության անդամների համաձայնության փոփոխությունները: Համաժամանակյա կտրվածքով ուսումնասիրվել է հին հայերենի քերականական համակարգը (ձեւաբանական եւ շարահյուսական մակարդակներ), եւ առանձնացվել ու մեկնաբանվել են լեզվաքերականական այն միջոցները, որոնք ծառայում են նշված մակարդակների քերականական իմաստներն արտահայտելուն:

1. Ձեւաբանական տիպաբանության հարցերը քննության են առնվել անուն խոսքի մասերի եւ բայի թվի քերականական կարգի, հոլովման եւ խոնարհման համակարգերի առումներով: Հեղինակն աշխատել է ցույց տալ, որ հին հայերենում, մասնիկավորումից եւ ներքին թեքումից բացի, քերականական իմաստներ արտահայտելու տեսակետից որոշակի դեր ունեն նաեւ տարահիմքությունն ու սպարկու բառերը: մի հանգամանք, որ զգալիորեն խայտաբղետ է դարձնում հին հայերենում քերականական իմաստների արտահայտման միջոցների համակարգը: ուստի վիճակագրական մոտեցումով հնարավոր է միայն հստակ որոշել, թե հին հայերենում լեզվական-քերականական ո՞ր միջոցն է գերակշռում քերականական իմաստներ արտահայտելու տեսակետից:

2. Շարահյուսական տիպաբանության հարցերը դիտարկվել են նախադասությունների կառուցատիպերի, նախադասության անդամների համաձայնության, ներառման ստորադասական կապակցությունների, սպասարկու բառերով կառուցների իմաստների, նրանց շարահյուսական



կաղապարների առումներով եւ այլն:

Հայագիտության մեջ ընդունված է այն տեսակետը, որ հին հայերենը տիպաբանորեն պատկանում է թեքական կառուցատիպի լեզուների թվին, թեւ ունի կցականության որոշ տարրեր: Անշուշտ, այս տեսակետը որոշակի հիմնավորում ունի, եթե հարցը դիտարկվում ենք գոյականի հոլովման եւ բայի խոնարհման համակարգերում, սակայն այդ նույն համակարգերում քերականական իմաստներն արտահայտվում են առավելապես կցականության (մասնիկավորման) միջոցով, եթե անտեսենք քերականական իմաստների արտահայտման այլ միջոցներ եւս, որոնք նույնպես կենսունակ են այդ ոլորտում, ինչպես՝ ներքին թեքում, տարահիմքություն, սպասարկու բառերի գործածություն եւ այլն: Ըստ այդմ՝ անհրաժեշտություն է առաջանում նոր մեթոդաբանությամբ ուսումնասիրել հին հայերենի համաժամանակյա քերականական կառուցվածքը, որոշել նրա տիպաբանական բնութագիրը, ճշգրտել

որոշակի հարցեր, որոնք մինչ այժմ անտեսվել են տուրք տալով հին հայերենի քերականական համակարգի ավանդական բնութագրին: Աշխատանքում փորձ է արվում հիմնավորելու այն տեսակետը, որ հին հայերենի ձեւաբանական կառուցվածքը տիպաբանորեն կցական կառուցատիպի է՝ զուգակցված թեքական նությամբ, իսկ շարահյուսական համակարգը բավարարում է անվանական կառուցատիպի լեզուների տիպաբանության չափանիշները եւ բնութագրվում է անվանական կառուցվածքի լեզուների տիպով: Հեղինակի կատարած ուսումնասիրության արդյունքների եւ ամփոփիչ եզրակացության տվյալների հիման վրա հաստատվում է նրա առաջ քաշած վարկածը, որ հին հայերենի ձեւաբանական տիպաբանությունը բնութագրվում է մասնիկավորմամբ՝ թեքականության տարրերով: Հետեւաբար պետք է վերանայել հին հայերենի տրված թեքականության բնութագիրը եւ այն դիտել կցական կառուցատիպի լեզու:

Պրոֆեսոր Լ. Խաչատրյանի հեղինակած աշխատանքը՝ «Հին հայերենի քերականական համակարգի տիպաբանությունը», ինչպես նշեցինք, ունի ոչ միայն հայագիտական, այլև ընդհանուր լեզվաբանական նշանակություն: այն տալիս է այնպիսի կնճռոտ հարցերի պատասխանը, ինչպիսին հին հայերենի տիպաբանության խնդիրներն են: Աշխատանքը կարելուրով է հայոց լեզվի պատմության, պատմական քերականության եւ լեզվաբանական տիպաբանության հարցադրումների քննության համատեքստում: այն կարող է օգտակար լինել բանասիրական ֆակուլտետների ուսանողների, մագիստրոսների, ասպիրանտների, դասախոսների եւ, ընդհանրապես, բոլոր նրանց համար, ովքեր զբաղվում են հայոց լեզվի պատմության եւ լեզվաբանական տիպաբանության հարցերով:

Սերգո ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Կարիերայի ուղղորդման նոր նշանակական արդյունքներից անցում՝ որակականի

սկիզբը՝ էջ 4


- Խնդրում ենք ներկայացնել ավագ դպրոցում ներդրված կարիերայի ուղղորդման ազգային ծրագիրը:

- 2024 թ. ուղրտի համար նոր հնարավորությունների տարի է: ՀՀ ավագ դպրոցում ներդրված կարիերայի ուղղորդման ազգային ծրագիրը ծանաչվել է որպես լավագույն պրակտիկայի օրինակ եւ ներառվել Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ - OECD) այնպիսի երկրների ցանկում, ինչպիսիք են՝ Կանադան, Ֆինլանդիան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ն: Սա աննախադեպ արդյունք է ողջ տարածաշրջանում եւ մեծ հպարտություն: Գլոբալ մարտահրավերներին ընդառաջ, կարելուրով աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության բարձրացման ուղղված ակտիվ եւ նորարար քա-

ղաքականությունների իրականացումը՝ ՏՀԶԿ-ն վերջին տարիներին կարելուրում է կարիերայի ուղղորդման համակարգերի ներդրումը եւ խրախուսում կառավարություններին գործուն քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ: Այդ նպատակով ՏՀԶԿ-ի կողմից իրականացվող Կարիերայի պատրաստվածության նախագծի (Career Readiness project) շրջանակում հավաքագրվում են կարիերայի արդյունավետ ուղղորդման ուղղված աշխարհի լավագույն օրինակները, հաջողված քաղաքականությունների փորձերը: Որպես կանոն ցանկում մինչ օրս ընդգրկվել են զարգացած երկրների կողմից ներդրված ծրագրերը: Դրանք հրապարակվում են եւ որպես խորհրդատվություն տրամադրվում կառավարություններին, դպրոցներին, գործատուներին եւ այլ շահագրգիռ կողմերին, թե ինչպես լավագույնս պատրաստել երիտասարդներին մրցունակ լինելու արագ փոփոխվող աշխատաշուկայում: 2023 թվականի մայիսի 31-ից հունիսի 2-ը «խաթարված ապագա» #DisruptedFutures խորագրի ներքո ՏՀԶԿ-ի կողմից կազմակերպված համաշխարհային վիրտուալ կոնֆերանսին եվրոպական կրթական հիմնադրամի (ETF) երաշխավորությամբ եւ հրավերով առաջին անգամ մասնակցելու հնարավորություն տր-

վեց Հայաստանին: Հայաստանում ներդրված կարիերայի ուղղորդման ազգային համակարգը ներկայացրեց ԱՄՅՆ համակարգում գործող Մասնագիտական կողմնորոշման եւ կարողությունների զարգացման կենտրոնը, որը պատասխանատու է Հայաստանում ողջ կյանքի ընթացքում մասնագիտական կողմնորոշման եւ կարիերայի ուղղորդման համակարգի ներդրման մոդելների եւ մեթոդաբանության մշակման, գործարկման համար: Կոնֆերանսի ընթացքում ներկայացվեց 17 երկրում գործող քաղաքականությունների, պրակտիկաների եւ հետազոտությունների վերաբերյալ 43 հոդված: Հայաստանը տարածաշրջանից հրավիրված միակ երկիրն էր, որը ներկայացրեց իր ազգային համակարգը՝ շեշտադրելով հանրակրթական դպրոցներում ներդրված եւ ներկայումս փորձարկվող մեթոդաբանությունը: Կոնֆերանսից հետո անցկացված փորձագիտական քննարկումների արդյունքում Հայաստանի ազգային փորձը լավագույն օրինակ ճանաչվեց ներկայում առկա համաշխարհային պրակտիկայում: Այն արդեն ներառվել է ՏՀԶԿ-ի երկրների կողմից ներդրված առաջավոր դասերի շարքում:

Հ. ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ





Պարույր Սեւակ - 100

Հայրենեղբայրության նոր որակ

սկիզբը՝ նախորդ համարում

«Անլռելի զանգակատուն»։ Մինչ Սեւակը՝ Կոմիտասի կերպարն արդեն վերածվել էր 1915 թվականի ազգային մեծ ողբերգության խորհրդանշանի։ Զարեանը գրել էր «Կոմիտասի հիշատակին», «Կոմիտաս» պոեմները եւ կոմիտասյան այլեայլ երկեր, լույս էր տեսել Լյուսի Թարգյուլի «Կոմիտաս» (1956) վեպը։ Մամուլում տպագրվել էին հուշեր, որոնք ավելի ուշ ի մի բերվեցին «ժամանակակիցները Կոմիտասի մասին» (1961) գրքում։ «Անլռելի...»-ի առաջին հրատարակության (1959) ծավալը շուրջ 7000 տող էր, նոր խմբագրությանը 1966-ին լույս տեսավ կրճատումներով։ Առաջին հրատարակությունը 1963-ին վերահրատարակվեց նաեւ Բեյրութում ու Թեհրանում։ Պոեմը միանգամից հռչակեց հեղինակի անունը, եւ նա Մոսկվայից հայրենիք վերադարձավ որպես հերոս, ով խոսում էր ժողովրդի ազգային ցավից։

«Անլռելի...»-ն (գրել է 11.09.1957 - 28.11.1958) սկսելու հաջորդ օրը՝ այսինքն 1957-ի սեպտեմբերի 12-ին գրել է «Կոմիտասի դիմանկարի առջեւ» բանաստեղծությունը (ավարտել է 15-ին) եւ ուրվագծել նրա կերպարը՝ աչքերը «Այս աչքերը // Դեռ կենդանի նահատակ, // Այս աչքերը // Սարմին առած պաղատանք», բերանը՝ տաճար, ճակատը՝ «Մազալաթի հին պատահիկ», «Արբի ճակատ ու հերոսի ասպարեզ», կնճիռները՝ «Հնադարյան հին խազեր», ականջը՝ «Կախարդական ձայնամաղ»՝ «Սեղեդու դեմ՝ դռնբաց», «Քո ակա՛նջը, Կոմիտաս, // Քո ակա՛նջը // Պատարագվող եկեղեցի՝ սրբազան», մատները՝ «Դարմանի մեջ սարսուռ ցորեն ջուրը-կող», «Ու տաք մոխիր հավաքող»...

Կոմիտասի կերպարն ավելի վաղ պատկերել էր «Նորից երգում, մորմոքում է...» գործում։ Ներշնչանքը ուրվագծել էր կերպարը մնում էր մի երկրորդ ճանապարհ, որպեսզի մարմնավորվեր մտահղացումը։


Մտահղացման եւ ստեղծման մասին պատմում է «...իմ ողջ կյանքում ես մտքիս մեջ գրել եմ «Չանգակատուն», գրել եմ զանազան «ծեւերով»՝ իբրեւ վեպ, իբրեւ վիպակ, իբրեւ ուսումնասիրություն, իբրեւ հոդվածների շարք, իբրեւ ողբերգություն կամ դրամա. ես գիտեի, ու դա մի օր պիտի գրվի։ ... «Չանգակատուն» պոեմը գրվեց միանգամից, զարմանալի հեշտությամբ ու արագությամբ։ ...միզամածությունը վաղուց պատրաստ էր։ Անկարելի էր նաեւ այն, թե ինչպես այդ միզամածությունը պարզվեց ու բյուրեղացավ. «Իսկ դա կատարվեց Մոսկվայում, մի սարսափելի սառնամանիքային օր։ ...զարեջրատանը, հեռավոր Մոսկվայում, հանկարծ ռադիոյից հնչեց կոմիտասյան երգը։ Ինձ համար ասեմ ինչ պարզվեց մի վայրկյանում. պարզվեց նախ վերնագիրը՝ «Կոմիտասյան համանվագ», հետո՝ «Հայոց երգարան», հետո «Անլռելի զանգակատուն», ապա նաեւ կառուցվածքը՝ ըստ կոմիտասյան երգերի, այսինքն՝ շարադրել Կոմիտասի ողջ կյանքը ըստ նրա համապատասխան երգերի. եթե որը է՝ «Անտունի», եթե պանդուխտ է՝ «Կռունկ», եթե սիրո մասին է՝ «Սոնա յար»։ Եվ քանի որ գործը մտահղացված էր իբրեւ համանվագ՝ սիմֆոնիա, կամ իր եկեղեցական կարգը նկատի ունենալով՝ իբրեւ օրատորիա, ուրեմն պիտի ունենար իր հանդիսավոր սկիզբը» (5, 392-393)։ Պոեմը հրատարակելուց հետո 1961-ին հանդես եկավ «Դիմանկարի ամբողջացման համար» հոդվածով. հսկայածավալ պոեմից հետո զգում է, որ ասել ինչ է, որ ասել է։ Չեւավորվում է հիմնական հարցը՝ ո՞վ է Կոմիտասը. «Կոմիտասի գործը ամենից ավելի հիշեցնում է Մաշտոցի գործը» (5, 129)։ Հերոսի ընտրությունը կարելի էր. «Այսպիսին էր մեկ էլ Մաշտոցը։ Լինելով մեր առա-

ջին լեզվաբանը՝ ցայտօր նա մնում է նաեւ խոշորագույնը - անցած տասնհինգ դարերի ընթացքում մի այնպիսի դյուրաշարժ ու մշտափոփոխ լեզու, ինչպիսին է հայերենը, չկարողացավ շեղվել նրա կարգադրած հնչյունական համակարգից. «Ֆ»-ն այն բացառությունն է, որ հաստատում է օրենքը» (5, 130)։ Այս գուգահեռն էլ ավելի է կարեւորվում, որովհետեւ ինչպես Մաշտոցը, այնպես էլ Կոմիտասը, ասպարեզ եկան ժողովրդի պատմության բախտորոշ պահին։ Մաշտոցի զենքը գործում էր. «...բայց նոր ճակատամարտում նոր գեներ էր անհրաժեշտ։ Պիտի ծնվեր մի նոր Մաշտոց։ Եվ նա ծնվեց։ Եվ նա արեց իր գյուտը՝ նույնպես «նորոգ եւ սքանչելի»» (5, 131)։ Ինչպես Մաշտոցը՝ գիր, այնպես էլ «Կոմիտասն էր, որ հայերին հայոց երգ ու նվագ տվեց...»։ Հեղինակային այս բացատրությունները կարելի էր Կոմիտասի կերպարը ճիշտ հասկանալու համար՝ նկատի ունենալով նրա պատմական նշանակությունը։ Կոմիտասի մաքրագործած ժողովրդական երգը դիտվում է որպես ազգային այնպիսի բարձրագույն արժեք, որպիսին հայերենի հնչյունաբանությունը նշանակող Մաշտոցի տառակերտումն է։ Երկուսն էլ ձայն են. մեկը՝ խոսք, մյուսը՝ մեղեդի, երկուսն էլ ազգային ձեւ ու նկարագիր են ուրվագծում եւ ժողովուրդների այս բազմադարյան խառնամերձի մեջ առանձնացնում այն, ինչն ունի մեկ անուն՝ հայ եւ Հայաստան։

Առանցքում երգի տեսք առած հայոց ճակատագիրն է. ժողովուրդն ստեղծել է հոգու երգն ըստ ազգային կենսաբնության ձայնային-մեղեդային-խոսքային հատկանիշերի, որոնք ժամանակի ընթացքում ենթարկվել են օտար՝ արեւելյան՝ թուրք-թաթարական ազդեցությունների։ Դարավոր ոտխը եկավ ու հաստատվեց ոչ միայն տարածքների, այլեւ քաղաքաբանական շերտերի վրա։ Այլատերվեց շատ բան, նաեւ երգը։ Այստեղ է Կոմիտասի սխրագրությունը՝ որպես ազգային հերոս, մի նոր Սեւրոպ Մաշտոց, ով ազգայինը մաքրեց օտար նստվածքից եւ ժողովրդինը վերստին վերադարձրեց նրան։ Բայց այս ընթացքում ժողովուրդն էլ էր փոխվել, հարմարվել իրեն պարտադրվածին, ուստի Անդրամիկ-Նժդեհի սմաններն էլ պիտի գային, որ ժողովրդի հայկականությունը վերականգնեին։

Կառուցվածքով պոեմը համապատկերային, համանվագային է։ Կենտրոնում մշտապես գլխավոր հերոսն է՝ կյանքի թեթ ոչ մանրամասներով, որովհետեւ մանրամասները վիպական պատմիք են բնորոշ, ապա ընդհանուր գծերով, որ մի պահի դարձրում է անձնական կենսագրություն լինելուց եւ ծովվում է ժողովրդի պատմությանը։ Իշխում է քնարական եւ ոչ թե պատմողական ասացումը, ինչը խոսքը հեռու է պահում ենթադրվող մի տեսակից՝ չափածո վեպից։ Պատահական չէ, որ մի առիթով բանաստեղծն ասել է, որ պոեմի 7000 տողը 7 թույնում անգամ հնարավոր չէ պատմել («Литературная Армения», 1968, թիվ 8)։ Պոեմին տրված քնարական բնութագիրը (Ա, Արիստակեսյան, Պարույր Սեւակ, 1974, էջ 80) թերի է, այն ըստ ամենայնիք քնարապատմողական է (Վ. Առաքելյան, է. Ջրբաշյան), որովհետեւ դիպաշարային խորքային հենքը կա, առանց որի այս հսկայածավալ շարադրանքը կկորցնէր ձգողականություն կենտրոնը կամ առանցքից կխախտվեր։

Բաղկացած է վեց համազանգից՝ ցայգայույսի, արեւագալի, միջօրեի, ծավալվող, եղեռնի եւ «Միզանցող արծազանք». օրվա տեւողությունը դառնում է իրադարձությունների զարգացման հաջորդական ընթացք։ Վերջին արծազանքը հեռու չէ համազանգից։ Յուրաքանչյուր համազանգ ունի նվագագույնը հինգ, առավելագույնը տասը դողանք։



Դիպաշարային առանցքն ստեղծվում է կենսագրական հիմքով։ Կոմիտասի ծնունդն է, ում առաջին ճիշի մեջ ապագա իրադարձությունների նախանշաններն են։ Շատ արագ վրա է հասնում որբությունը. «Իր ժողովրդի զավակն իսկական՝ // ժողովրդի պես ինքն էլ որբ մնաց. // Նա նույնիսկ չկար եւ մի տարեկան, // Երբ... մայրը գնաց»։ Տասը տարեկան չկար, երբ մահանում է հայրը։ Այստեղից արդեն պատումն առաջ է գնում ժողովրդական երգի տրամադրություններով։ Այստեղ՝ «Տո լա՛ճ տնավեր...»։ Մանկահասակ երեխան ապրուստի համար սկսում է երգել դռնեղու։ Երագում մայրն էր՝ Թագուհին, ողբի մեջ հայրը՝ Գեւորգը։ Կոմիտասի ծննդաբանությունը սերում է Գողթան գավառի Յղնա գյուղից, որտեղից սերվել է նաեւ հայոց երգի մյուս համաճարը՝ Արամ Խաչատրյանը։ Պատահական չէ, որ Գողթանը հայտնի է որպես գուսանների, ասացող-վիպողների հայրենիք։ Ինքը՝ Կոմիտասը, ծնվել է Կուտինայում։ Աստիճանաբար լայնանում է խոսքի շրջանակը, իսկ Կոմիտասի կյանքը վերածվում է ազգային կյանքի խորհրդանշանի՝ հետեւյալ ընդհանրությամբ. «Ո՞վ է հասկացել քմայքը բախտի, // Եվ այն էլ... հայոց»։ 1881-ին Կոմիտասը դառնում է Գեւորգյան ճեմարանի սան։ Վեհափառի առաջ թուրքերեն է երգում, որովհետեւ հայ երգ չգիտեր. սուլթանն ու կայսրը իրենց հպատակ տարածքներում արգելել էին հայերենը։ Այս հակադրությունը հայոց երգի ապագա վարդապետի մեծությունն ընդգծելու համար է, ձայնային տվյալներից ելնելով՝ որպես բացառություն, նրան ընդունում են ճեմարան։ Ուսման, հայադարձումի հետ մեկտեղ ժողովրդական երգն է։ Սեւակը հեղինակային խոսքը եւս ոճավորում է համապատասխան բառուբանով. «...Նա մեկ տեսնում է, որ մի շեկ Սաթո թեւերը կանթել, // Կանգնել է իրենց կալի պոնկին։ // Քանին խլում է նրա մինթանան, // Որ նրա թմկիկ ծնկները բանա // Ու ցույց տա խալը ծալի մեջ ծնկի» (4, 35)։ Տասներկու տարեկան էր Սողոմոնը, երբ ընդունվեց ճեմարան, անցնում է եւս տասներկու տարի, «Ու Սողոմոնը Կոմիտաս դարձավ»։ «Եվ որտեղ երգը՝ այնտեղ էր հիմա եւ Կոմիտասը» տողը վերածվում է կրկներգի, անցնում դողանքից դողանք։ Սա դառնում թե՛ մոտիվ, թե՛ լեյտմոտիվ եւ իր իմաստային առանցքի շուրջ համախմբում խոսքի իմաստային շարույթը։ «Երգը երկրից է ծնվում», - կասեր Զարեանը։ Այս մտայնությունը նաեւ Սեւակի խոսքի շարադրանք է։ Յուրաքանչյուր երգ առիթ է պատկերելու հայոց բնաշխարհը. հայոց հայրենիքն է՝ հունձի սպասող ցորենի արտեր, կանաչ խոտհարքներ, ագիներ, շոգ եւ ծնվող երգի տողը. «Յո՛ւ վրեք, սարեր, // Մի քիչ զով արեք»։ Եռում է աշխատանքը։ Հայացքներից սեր է կաթում, ու նորից երգ. «Ի՞նչ անեմ, Սարե՛, // Արեւն ինձ կերե՛»։

Ամռան տապը փոխվում է աշնան իմաստուն հանդարտության։ Ու նորից երգը. «Աշուն եկավ սարիցը», «Կամաց քշեք սեւերը», «Երկինքը ամպել է», «Ես լուսնյակ գիշեր»։ Գալիս է վաստակած բարիքների ու հարսանիքների ժամանակը։ Վանական խցերից դուրս հայոց աշխարհի կենդանի կյանքն էր։ Խորանում է ժողովրդական տարերքը, որպեսզի առաջիկա զարգացումների մեջ կերպարը հասունանա եւ ամբողջանա. «Ե՛րգը... // Կարծես տնից ելած մի պանդուխտ էր բազմաթափառ // Եվ ուզում էր կրկին փարվել հայրենիքին։ // Հայրենիքն էր նրա ոգին» (4, 55)։ Կոմիտասի ականջը բնաշխարհի ձայներին է՝ քանո շառաչն է, արտույտի երգն է, անասունների մայունն ու բառաչն է, մշտապես շիւնականի երգն է՝ «Յո՛ւ, հո՛ւ, հո՛ւ ընկավ, // Դարդս ծովն ընկավ», հայոց լեզուն է իր բարբառով ու երաժշտությամբ։ Այս տեսակետից տիպական ու շատ հայեցի է «Բնաշխարհիկ» դողանքը.

Պիտի վարեն ու հերկեն,
Վարեն հերկեն
Ու երգեն.
-Օրինյալ է աստված,
Հիշյալ է աստված...
Վերջը կանչեց գոմի դռանը,
Դեռ նոր է բացվում աղոթարանը,
-Աստված, փառքը չա՛տ...
ուբանն է գնում - գութանն է գալիս.
Այ ճըլ-վըստ, ճըլ-վը՛ստ...
Ուրախությունից ակներն են լալիս.
Այ ճըլ-վըստ, ճըլ-վը՛ստ... (4, 59):

Հաջորդում է «Հորովել»-ը՝ «Հո արա, եզո՛ քան, հորովել...»։ Ակնհայտ մի առանձնահատկություն. ժողովրդական երգի տողերը խաղաղանելով՝ բանաստեղծն իր հերթին ստեղծում է մի նոր ժողովրդական երգ։ Ահա նշված տողն ամբողջական ընդգրկումով. «Հո արա, եզո՛ քան, հորովել, // Ծարավ ես՝ ես էլ եմ ծարավել, // Դարձած ես՝ ես քեզնից առավել, // Ինձ էլ է արելը խորովել. // -Հորովել» (4, 62)։ Սեւակն իր հերթին անում է ճիշտ այն, ինչ Կոմիտասը. Կոմիտասը պիտի վերստեղծեր հայոց ազգային երգը, Սեւակն ազգային երգի պատկերաշարով ստեղծում է իր խաղն ու խաղիկը, անտունին ու ջանգյուլունը։

Ուսման տեւելը Կոմիտասին հասցնում է Բեռլին, որպեսզի օրատորիաների ու մեսաների փոխարեն սովորի հնչեցնել պատարագ, սուրբ-սուրբ, ժողովրդական երգ։ Օտար պատրաստի արժեքները կան, որ որբան ուսուցանում, նույնքան կլանում-կուլ են տալիս, քոնի վրա դնում իրենց հետքը։ Մինչդեռ Կոմիտասն իրենքն էր ուզում պահպանել։ Երաժշտական միջավայրն օտար, բառուբանն օտար, բայց հարազատ մի շունչ կենդանի էր պահում նրա տարերքը, որովհետեւ խորքից հնչում էին հարազատ ձայներ՝ «Կռունկ, խաբրիկ մը չուցի»։ Այս պահին նրան են հասնում հայոց առաջին կոտորածների լուրերը. «Ախ, էլ ի՞նչ կռունկ, // Երբ հիմա վառման թոնիր է դարձել // Թոնիրի երկիր Հայաստանն ինքը, // Ու թոնիրն որված սեւ խուկի էր կարծես // Հայոց երկինքը» (4, 74)։ Անհատի կյանքին ու աշխատանքային ծրագրերին խառնվում է հայոց պատմությունը։ Հայոց հարցի հույսի նշույլ ունեցող 16-րդ հոդվածը դառնում է 61, եւ նախ սուլթան Համիդը, ապա եւ հաջորդները Հայոց հարցը լուծում են հայությանն իր հայրենիքում բնաջնջելով։ Խորանում են սգո ու ողբի նվագները. «Կռունկ հա կռունկ, // Ախ էլ ի՞նչ կռունկ...», «Այս արհավիրքից, զուլունից այս չար // Դե, եկ, տնավե՛ր, մի՛ խելագարվիր...»։

(Հարունակելի)
Դավիթ ԳԱՍՊՐԱՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «*Ղազանչիի միջնակարգ դպրոց*» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (22 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ՉՁե 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գորույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (ՉՁե 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական զբոսյկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ։

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բժօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում։ Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչե փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են **փետրվարի 14-ից մինչև փետրվարի 27-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից**։

Մրցույթը տեղի կունենա **մարտի 1-ին՝ ժամը 14:30-ին**, ՀՀ Շիրակի մարզի Ղազանչիի միջնակարգ դպրոցում։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 54-23-72 հեռախոսահամարով։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երեւանի գր. Նարեկացու անվան հ. 137 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (21 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ՉՁե 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գորույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (ՉՁե 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական զբոսյկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ։

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բժօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում։ Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են **փետրվարի 14-ից մինչև փետրվարի 27-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից**։

Մրցույթը տեղի կունենա **փետրվարի 29-ին՝ ժամը 13:00-ին**, Երեւանի գր. Նարեկացու անվան հ. 137 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Շենգավիթ, Սողոմոն Տարոնցի 17։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 48-66-00, (010) 48-66-01 հեռախոսահամարներով։

Ա Ձ Դ

Հայտարարություն

«*Երեւանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ*» ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար։

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր)։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնակաՆացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թրքային և էլեկտրոնային տարբերակներով՝ վերոնշյալ կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան.

5) ինքնակենսագրություն

Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ։

Փաստաթղթերն ընդունվում են **2024 թ. փետրվարի 14-ից մինչև մարտի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 14:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից**, Երեւանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջում, հասցեն՝ ք. Երեւան, Մաշտոցի պողոտա 11։

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. մարտի 15-ին՝ ժամը 12:00-ին**, Երեւանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջում։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (044) 14-41-81 հեռախոսահամարով։ էլեկտրոնային հասցեն՝ melikyanromanos@gmail.com։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Նոր Գեղիի ակադեմիկոս Գ.Աղաքանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Իրավունքի հիմունքներ» (180 ժամ, կարող է դասավանդել այն անձը, ով ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում (բակլավալի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տարը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ), «Գյուղատնտեսության մեթոճայացում» (ուսումնական մոդուլները կարող է դասավանդել այն անձը, ով ստացել է դասընթացի բնույթին համապատասխանող միջին մասնագիտական կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատակալին գործունեության փորձ եթե տվյալ դասընթացի ուղղությանը միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում) դասախոսի թափուր տեղերի համար։ Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքային փորձի առկայությունը ցանկալի է։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (ՉՁե 1),

2) կրթության մասին հաստատող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),

3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն (ՉՁե 4)

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետությունում համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիները.

8) Հայաստանի Հանրապետությունում արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինզորույկ (բնօրինակը և պատճենը),

9) գիտական աստիճանը, գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

10) Ըստ պաշտոնի ավակնորդի հայեցողության՝ գիտամանկավարժական գործունեությունը բնութագրող այլ փաստաթղթեր։

Փաստաթղթերն ընդունվում են **մինչև 2024 թ. փետրվարի 20-ը ներառյալ՝ ժամը 10:00-ից 16:00-ը (բացի շաբաթ, կիրակի և հանգստյան օրերից)**, Նոր Գեղիի ակադեմիկոս Գ.Աղաքանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում, հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, Ուսանողական 5։

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. փետրվարի 26-ին՝ ժամը 11:00-ին**, Նոր Գեղիի ակադեմիկոս Գ.Աղաքանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (099) 32-35-45, (077) 15-88-27 հեռախոսահամարներով։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Էքմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Պիճերենցիալ և ինտեգրալ հաշվի կիրառություններ» (144 ժամ), «Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն» (96 ժամ), «Հայտը լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ» (74 ժամ), «ՀՀ բանկային օրենսդրություն» (72 ժամ), «Բանկային մարքեթինգ» (108 ժամ), «Հաշվապահական հաշվառումը բանկերում» (72 ժամ), «Ավանդային և վարկային գործառնություններ» (144 ժամ), «Բանկային համակարգային ծրագրեր. «ՀԾ բանկ» համակարգ» (144 ժամ), «Մեծածախ առևտուր» (72 ժամ), «Մեդյանդարգինգ» (36 ժամ), «Ստատիստացում» (ոչ մրցույթային, 72 ժամ), «Ոչ պարենային ապրանքների ապրանքագիտություն» (ոչ մրցույթային, 90 ժամ), «Վաճառքի հաղորդակցություն» (ոչ մրցույթային, 54 ժամ), «Լոգիստիկ կապաղիներ» (ոչ մրցույթային, 24 ժամ), «Անճանակ խմամքի, հիգիենայի և բուժական ծառայությունների սպասարկման կազմակերպում» (180 ժամ), «Միջոցառումների սպասարկման կազմակերպում» (72 ժամ), «Բույսերի աճի և զարգացման համար անհրաժեշտ գործոնները» (54 ժամ), «Մոլախոտերը և պայքարը դրանց դեմ» (38 ժամ), «Բանջարաբուստանային մշակաբույսերի մշակության և բերքահավաքի տեխնոլոգիա» (60 ժամ), «Ցանցաշրջանառության համակարգերը և դրանք առանձնահատկությունները» (48 ժամ), «Մշակաբույսերի արտադրության տեխնոլոգիաները պաշտպանված գրունտի պայմաններում» (60 ժամ), «Լանջերի վրա բազմամյա տնկարկների հիմնման տեխնոլոգիաները» (72 ժամ), «Համակարգչային մոնտաժ» (72 ժամ) առարկաների (մոդուլների) դասախոսի թափուր տեղերի համար։

Մանկավարժի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշով սահմանված պահանջները.

- Բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ։

Պահանջվող փաստաթղթերի ցանկը՝

1. դիմում,

2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),

3. անձնագիր (բնօրինակը և պատճենը),

4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5. ինքնակենսագրություն,

6. մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7. այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների.

8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական զբոսյկ (բժօրինակը և պատճենը),

9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)։

Փաստաթղթերն ընդունվում են **2024 թ. փետրվարի 14-ից մինչև փետրվարի 27-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից**, Էքմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջում, հասցեն՝ ք. Էքմիածին, Մ. Խորենացու 1։

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. փետրվարի 29-ին՝ ժամը 13:00-ին**, Էքմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջում։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 55-22-72 հեռախոսահամարով։

Հայտարարություն

«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար։

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր)։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թրքային և էլեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան.

5) ինքնակենսագրություն։

Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ։

Փաստաթղթերն ընդունվում են **2023 թ. փետրվարի 14-ից մինչև մարտի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը 16:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից**, Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում, հասցեն՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 96։

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. մարտի 15-ին՝ ժամը 13:00-ին**, Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (033) 27-32-32, (093) 15-93-81 հեռախոսահամարներով։

էլեկտրոնային հասցեն՝ statecollege@list.ru։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Երեւանի տարածաշրջանային հ. 1 պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Ոսկերիչ արտադրական ուսուցման վարպետ» («Էսթիզ, գծանկար և գուճանկար» 48 ժամ, «Արտադրական ուսուցում»՝ 96 ժամ) մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոսի թափուր տեղերի համար։

Մրցույթին կարող են մասնակցել՝

Այն անձինք, ովքեր ունեն մոդուլի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ եթե տվյալ մոդուլի ուղղությանը միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում։

Մրցույթն անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

1) դիմում (ՉՁե 1),

